

21815

891.99.092


U-80

ՄԿՐՏԻՉ ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ
ՅՈՐԵԼԵԱՆԸ

„ԱՐՄԵՆԻԱ“

1885 – 1910

1911
«ՀԱՅՐԵՆԻՔ»Ի ՏՊՈՐԱԿ
ՊՈՍԹԸՆ



891.000 002

15-80

2003



ՄԿՐՏԻՉ ՓՈՐԹՈՒԿԱԼԵԱՆ,



37441-67

51178-4-L.

1870 թւականին էր, երբ ՏիարՄկրտիչ Փոր-
թուգալեանը, մէկը հայրենիքի անձնուէր զաւակ-
ներից թողուց Ուժորի վայելքները և մայրա-
քաղաքի հրապուրիչ կեանքը, և ազգային մշակի
պարտաճանաչութեան գիտակցութեամբ՝ անցաւ
Հայաստան, Թոգաթ, իրեւ ուսուցիչ կռւելու
խաւար տղիտութեան դէմ, պաշտպանելու ազ-
գային սահմանադրութիւնը աղայական կամայա-
կանութեան դէմ և միանգամայն ներշնչելու հայ
ժողովրդին իւր վիճակի գիտակցութիւնը:

Թոգաթի մէջ՝ իւր չորսամեայ ուսուցչական
պաշտօնավարութեամբ յաջողեցաւ հիմք դնել
կրթական նոր ուղղութեան և ոտեղծել գաղա-
փարական երիտասարդութիւն մը, ազգային ի-
րաւոնքների պարտաճանաչութեամբ դաստիա-
րակւած, կռւելու ազգային իրաւոնքների բըու-
նաբարումների, կառավարական պաշտօնեաների
կամայականութեան և աւատապետների ու բըու-
նակալների հասցուցած չարիքների դէմ։ Փոր-
թուգալեանը իւր երիտասարդական աւիւնով մը-
ղած այդ պայքարին մէջ՝ կռեց իւր կամքը և
ձեակերպեց իւր համակրելի նկարագիրը։ Եւ երբ
աղայութեան, կամայականութեան ու տղիտու-
թեան դէմ մղած այդ կատաղի կռւին համար

կառավարութեան ձեռքով Սեբաստիա տարւեցաւ
բանտարկւելու՝ բանտի խորքերից անվեհեր գոր-
ծիչի մը արիութեամբ և հաւատքով երգեց .—

«Թէպէտ վտար քաղքէ-քաղաք գամ թափառ
Բաղդն ու մարդիկ զիս հալածեն անդթաքար,
Այլ արդ են իսկ ազատութեան երբ վեհաձայն
Թռաւ բերնէս, յանձն առի զայս վիշտն համայն,

Ազատութեան ես անձներ,

Վիշտ, ցաւ սիրով եմ յանձն առեր» :

Անցան երեսուն և եօթ երկար տարիներ այդ-
օրից և Փորթուգալեան, «ազատութեան անձնը-
ւէր»ը հասարակական անբասիր գործիչի մըկեան-
քով ապրեցաւ՝ գործեց և չէ դադրած գործեէ :

73 թւին Սեբաստիայէն Պօլիս վերադարձաւ
ակրամայ, և այնտեղ հիմնեց «Ասիա» թերթը, որ
իւր կարճատեև կեանքով, եղաւ նախերգանք մը
ազատագրական շարժման, արձագանգ՝ գաւառի
հայութեան զրկանք չարչարանքներին, բողոք
ազգային իշխանութիւնների կամայականութեան
դէմ և ջերմ կողմանկից Հայոց Հայրիկի դաւա-
նած գաղափարներին :

Պօլսոյ մտաւորականութեան 70-ական թւա-
կանների կրթական շարժման մէջ՝ անմասն չի
մնաց և Փորթուգալեանը : Արքիարեանի, Զերա-
զիթի ուրիշ քանի մը երիտասարդ ուժերի հետ՝
հիմք դրեցին «Արարատեան Ընկերութեան», որը
ապա միանալով Դարոցասիրաց և Կիլիկեան ըն-
կերութիւնների հետը՝ կոչւեցաւ «Միացեալ Ըն-
կերութիւնք Հայոց», և ինք եղաւ այն անձնու-
րաց ուսուցիչը, որ առաջին անդամ յանձն ա-
ռաւ գաւառացի մանուկներու դաստիարակու-
թեան գործը անձամբ վարելու ծանր պատասխա-
նատութիւնը :

76 թւին անցաւ Կիլիկիա, շրջեց Հայաստա-
նի գլխաւոր կեղրոնները և հասաւ Վան, Հար-
յաստանի սիրտը, որի ժողովուրդը բարբարոսու-
թեան ձեռքով հրդեհւած՝ քաղաքի մախրակոյտի
վրայ նստած կը սգար իւր սև օրերը : Այդ
աւերակ քաղաքը ընտրեց իւր գործունէութեան
վայրը, նախատակ գնելով հիմնել յանուն Միաց-
եալ Ընկերութիւնների «Վարժապետանոց» մը,
որ դառնար լուսոյ վառարան մը, իւր շրջակայ
խաւար գաւառները լուսաւորելու առանց դա-
սակարգի խտրութեան :

Ծուս-թրքական պատերազմի նախօրեակին
Հնարաւորութիւն չ'մնաց Փորթուգալեանին Վան
մնալու : Պարսկաստանի վրայով անցաւ Թիֆլիս։
Այնտեղ ծանօթացտւ 19-րդ դարու հասարակա-
կան ամենամեծ գործիչներից մէկի «Մշակ»-ի
խմբագիր Գրիգոր Արծրունու հետ, և սկսաւ աշ-
խատակցիլ անոր թերթին և Տաճկահայու ու Ռու-
սահայ հալածւածների մերձեցման առաջին կա-
պը հանդիսացաւ :

Այդ շրջանին Տաճկահայերի դատը մեծ հե-
տաքրքրութիւն առաջ բերած էր Ծուսահայ մը-
տաւորականութեան մէջ, և «Մշակ»ի խմբագ-
րապետը՝ այդ չարժման ողին իսկ անոր խմբագ-
րատունը այդ ողեւորութեան վառարան դարձած
էր : Ազգային վերածնութեան մեծ մշակները
Բաֆֆին, Պատկանեան և ուրիշներ՝ հաւաքւած-
էին այդ վառարանի շուրջը : Այդ վառարանի մէջ
էր, որ մօտաւորապէս մէկ ու կէս տարի Փոր-
թուգալեանը իր զգացումները աւելի տաքացուց
և հասարակական մեծ գործիչի, Արծրունու ներ-
շնչումներով աւելի ողեւորւած՝ ուսու-թրքական
պատերազմից անմիջապէս վերջ Վասպուրական

վերադարձաւ մեծ իտէալներով իւր ծրագիրն իրականացնելու :

Անոր ծրագիրն էր հայ ժողովուրդին ներշնչել, ձգտում դէպի լոյս և գիտակցութիւն, ընդգուռմ՝ ընդդէմ բռնապետութեան, կոփու ընդդէմ աւատապետական բռնաբարումների, և վերջապէս գիտակցութիւն՝ ստրկական դարաւոր շղթաները վշշրելու :

79 թւին նա հիմնեց «վարժապետանոց»-ը Վանի մէջ, լայն և ազատամիտ ծրագրով մը, անոր դուռը բաց յայտարարելով հայի, քիւրտի, թուրքի, ասորու և եղիդիի առջև։ Երկար չ'աեւեց սակայն «վարժապետանոց»ի կեանքը։ Վեղարաւոր և անվեղար հակառակորդների չարախոսութիւններին անսալով՝ Միացեալ ընկերութիւնը գոցեց այդ հաստատութիւնը, և Փորթուգալեանին Պօլիս հրաւիրելավ՝ 30 ոսկի ամսականով ուղեց Կիլիկիա ուղարկել տեսչութեան պաշտօնով։ Գաղափարի մարդը մերժեց այդ հըրապուրիչ պաշտօնը, և սկսած գործը շարունակելու յանդգնութեամբ, իւր անհատական ուժերին վստահած՝ Վան վերադարձաւ սիրած գործը շարունակելու։ Հիմնեց «կեդրոնական վարժարանը իրեն աջակից ունենալով Հայոց Հայրիկի բարեկամութիւնը և մէկ երկու վանեցիներու աջակցութիւնը։ Կեդրը վարժարանը շարունակեց աւելի արդիւնաւոր եղանակով չորս տարի, մինչև 1885 թւականը, երբ վանեցի աղաների դատապարտելի ընթացքը պատրւակ բռնելով՝ կամայական կառավարութիւնը Փորթուգալեանին հեռացուց Վանից։ Մկրտիչ Աւետիսեան վարեց կեդրոնական վարժարանի տեսչութիւնը, որ վերջնականապէս գոցւեցաւ քանի մը ամսից յետոյ:

ՀՅՈՒ Փորթուգալեանի հօթնամեայ գործունէութիւնը Վասպուրականի մէջ, իւր կեանքի ամենաբեղուն շրջանը կը կազմէ։ Վարժապետանոցը և անոր շարունակութիւնը եղող կեդր, վարժարանը՝ եղան վառարաններ նոր գաղափարների, որոնցմով սնաւ և ջորացաւ Վասպուրականի երիտասարդութիւնը։ Փորթուգալեանը, Հայոց Հայրիկից յետոյ, առաջին մարդը եղաւ, որ յաջողեցաւ յեղարջել Վասպուրականի կրթական գործը։ Իւր հասցուցած ուսուցիչներով և իւր յամառ աշխատութեամբ՝ ան քանդեց Տէր Թօթիկեան սիստէմը, և ժամանակակից կրթական նոր ուղղութեամբ ահագին զարկ տւաւ Վասպուրականի դպրոցներուն։

Նա ցանեց նոր կեանքի, նոր գաղափարների և յեղափոխական պայքարի կենդանի սերմեր հայ ժողովրդի սրտին և մտքին մէջը։ Սերունդներ դաստիարակւեցան այդ ուղղութեամբ, անոր աշակերանները երկար տարիներ Վասպուրականի, Ասրավատականի, Տուրուբերանի և Բաղէչի կըրթական գործը վարելով մէկտեղ՝ եղան և յեղափոխական գաղափարների առաքեալներ։ 96 թւի Վանի ինքնապաշտպանութեան կուին մէջ երկան եկաւ Փորթուգալեանի ցանած սերմերի արդիւնքը։ Նա եղաւ աղատազգական շարժման նախակարապետը Վասպուրականի մէջ։ Եւ այսօր հայրենիքի ազտուութեան այս արևածագին՝ գէթ հայութեան երախտագիտութեան և չնորհակալութեան պէտք է արժանանայ գաղափարի այդ անձնւէր Մշակը։

Փորթուգալեան Պօլիս անցնելով՝ երկար չուզեց սպասել, և երբ Վան վերադառնալու ամէն յցսը կտրած տեսաւ, անցաւ Մարտէյլ և 1885

թւականին, այնտեղ հիմնեց հայ տառապանքի արձագանք հանդիսացող աղատական և յեղափոխական առաջին հայ թերթը «ԱՐՄԵՆԻԱ» : «Արմենիա»-ով ան սկսաւ մէկ կողմից ցոյց տալ թիւրք կառավարութեան, Հայաստանի մէջ գործ դրած բռնապետութիւնն ու բարբարոսութիւնը, կառավարական զեղծ պաշտօնեաների կամայականութիւնը, քիւրտ աւատապետներու թաւանը, կողոպուտն ու ոճրագործութիւնը, և միւս կողմից ներշնչել հայ ժողովուրդին ինքնագիտակցութիւն և քարոզել ինքնապաշտպանութիւն : Փորթուղալեանը «Արմէնիա»-ով, 25 տարիներից իւր, միշտ բարձր պահեց գաղափարի գործը և իւր սկսած կուր նաշարունակեց անշեղ, համոզւած գործիչի մը անվեհերութեամբ մինչև այսօր՝ երբ արդէն ծագած է Օսմանեան Հայրենիքի ազատութեան արշալյուր : Ո՛չ նեղութիւն, ո՛չ հալածանք և ոչ էլ կաշառք չի կարողացան ընկճել ժողովրդանուէր գործիչի յամառ կամքը : Նա իւր գործունէութեան ամբողջ շըրջանին, թէ՛ իրեն ուսուցիչ, թէ իրեն հասարակական գործիչ և թէ իրեն հրապարակագիր ու խմբագիր բողոք բարձուց բռնութեան դէմ, իր սիրտը տւեց հայ տառապանքը մեղմացնելու, և իր միտքն ու գրիչը նուիրեց ցնցելու հայութեան սարկացած ոգին՝ ընդդէմ բռնութեան : Նա իր անշահախնդիր և անյողգողդ նկարագրով միշտ մաքուր և բարձր պահեց այդ գրօշակը, որ պարզած էր յանուն յեղափոխութեան, յանուն ազատութեան և յանուն բողոքի, ընդդէմ բռնապետութեան, կամայականութեան և բարբարոսութեան :

Գիտենք, կան մարդիկ, որոնք թէ՛ այսպէս

անհատ և թէ իրեն կուսակցութեան անդամներ, շատ մը կէտերի մէջ, քաղաքական հայեացքներով և գաղափարներով կը տարբերին Փորթուղալեանից, բայց ինչ որ իրական է և ընդհանուր՝ այդ է անոր անձնուէր ողին քառասնամեայ ժողովրդանուէր իւր անշահախնդիր գործունէութիւնը, հասարակական գործիչի ու հայրենասէրի անազարտ նկարագիրը, որի հանդէպ յարգանքի զգացում տածելը, բոլոր հայերի պարտականութիւնն է :

Քաղաքակիրթ աղգերի մէջ վաղուց արմատացած է հասարակական ուժերին, լինեն ատոնք բանաստեղծ, ուսուցիչ, հրապարակագիր, գեղարւեստագիտ, հայրենասէր թէ յեղափոխական, ժողովրդական երախտագիտութեամբ բարոյապէս և նիւթապէս վարձատրելու պարտաճանաչութիւնը : Այդ բարի սովորութիւնը որդեգրած են մեր ոռւսահայ եղբայրները շատ վաղուց : Այսօր, սահմանադրական Տաճկաստանի հայ ժողովուրդը, իր երախտագիտութիւնը և բարոյական ու նիւթական քաջալերութիւնը չը պէտք է խընացէ իւր ծոցից դուրս եկած հայրենասէր գործիչներին և արժանաւոր մշակներին, որոնք նըւիրած են իրենց սիրտը, միտքը, կեանքը և բազուկը ժողովրդի յառաջդիմութեան և ազատագրութեան համար :

Նորագատ տաճկահայերի վայելած բարօրութեան ամենամեծ գերակատարներից մէկի, Տիառ Մկրտիչ Փորթուղալեանի յոթելեանը տօնելու առաջարկը, ամենէն առաջ հրապարակ դրեցին «Բազմավէկլ» ու «Ազատամարտ»ը, և անոնց արձագանք տւեց տաճկահայ և ամերիկահայ մամուլի մէկ մասը : Այսօր, Փորթուղալեանի գոր-

ծունէութեան քառասնամեակը , և «Արմենիա»ի քսանկինդամեակը տօնելու նպատակով՝ Ամերիկայի մէջ կազմւած «Յորելեանական կեդրոնական Յանձնախումբը» , կուգայ գործնական հողի վրայ դնելու այդ միտքը , և միանդամայն իւր կողմից հրաւէր կը կարգայ ամբողջ հայութեան , առանց յարանւանական և քաղաքական , կուսակցական խորութեան՝ տօնելու մէր ամենամեծ հայրենասէրներից և հասարակական անձնէր գործիչներից մէկի՝ Փորթուգալեանի յորելեանը :

Համազգային երախտագիտութեան և քաջալերութեան արժանի է Փորթուգալեանը , իրքեհայ ազատագրութեան և ազգային վերածնութեան ռահկիրաներից մէկը : Մենք կ'ակնկալենք որ Պօլսահայը , իրուեւ համարադաքացի և իրքեածակահայ մտաւորականութեան առաջնորդ , ի պատիւ իր մեծ հայրենակցին և հայրենասէր գործիչին , պիտի ճեռնարկէ փառաւոր հանդէսով մը տօնելու անոր յորելեանը , առաջիկայ Մայիս 24ին , Աղդ . Սահմանագրութեան յիսնամեակին հետ , Պօլիս հրաւիրելով Տիար Փորթուգալեանին , որ տասնեակ տարիներ Ազգային Սահմանագրութեան գործադրութեան և ժողովրդականացման համար աշխատած է Հայաստանի խորքերը : Տօնելով Փորթուգալեանի յորելեանը , հայ ժողովուրդը երկու բան նկատի պէտք է ունենայ : Նախ՝ բարդական քաջալերութիւն անձնէր ուսուցչին և անքափիր գործիչին , և ապա նիւթական քարձատրութիւն անկաշառ հրապարակագրողին , հայրենասէր և յեղափոխական վեթերանին : Հայութեան բոլոր հատւածները , յանուն հանրապին պարտականութեան , իրենց բաժինն ունին կատարելու՝ նիւթական և բա-

րոյական վարձատրութեամբ , քաջալերելով ժողովուրդի լաւագոյն զաւակներից մէկին :

Նարժումը պէտք է սկսի կարելի եղածին չափ չուտ , ապա հովելու համար նիւթական պատկառելի գումար մը : Այս շարժման ընթացք տալու համար , մենք կը դիմենք հայ ժողովրդի ծոցից բարձրած բոլոր բարեգործական , կրթական և յեղափոխական կազմակերպութիւններին , հայ մամուլի ներկայացուցիչներին և ամէն մի պարտաճանաչ անձնաւորութեան , որ նախաձեռնեն կազմակերպելու յանձնախմբեր , ժողովներ , հանդէսներ և շուտով ձեռնարկեն հանգանակութեան :

Ամէն ըլջան , իր հանգանակած գումարը կարող է կեգրոնացնել որոշ տեղ մը , մինչև որ շուտով , մենք կը հաւատանք , Պօլսոյ մէջ կը կազմւի «Յորելեանական կեդրոնական Յանձնախումբ» մը , որուն կ'ուղարկի ամէն կողմից , Կովկասից , Թիւրքիայի բոլոր կողմերից , Պարսկաստանից , Հնդկաստանից և Ամերիկայից հանգանակած գումարները :

Մենք կը դիմենք և մասնաւորապէս Ամերիկահայ գաղութին , և կոչում կ'ընենք անոր հանգանացին զգացումներին , չուտով կազմակերպելու հանդէս-ժողովներ , և ինչպէս միշտ այս անգամ ալ , հրապարակացին հանգանակութիւններով լի-աբուոն վարձատրելու բազմաշխատ յորելեարը , որի կեանքը տառապանք մը եղած է հայ դատին նւիրւած :

Հայ ժողովրդի պարտաճանաչութիւնը նիւթական և բարյական քաջալերութեամբ հանդէպ քառասնամեայ գործիչի մը , իրաւունք պիտի տայ Յորելեարին , ուրախ և հպարտ , անգամ մըն ալ թրթուացնելու իւր երգը , որ երգեց երիտասարդութեան աւիւնով բանտի

Խորերից, երբ հազիւ ստք էր դրած հասարակական գործունէութեան փշոտ ասպարէզը :

Դէ՛հ, հայ ժողովուրդ, առաջ անցիր երախոտագէտ զգացումներով Մկրտիչ Փորթուգալեանին, կամաւոր աքսորականին ասելու :—

«Վարանդի, թէկ դառն էին այդ օրեր,
Ահա տեսնես նպատակիդ ես հասեր,
Աղատութեան յաղթանակը քո ձեռքիդ,
Վարդ և շուշան, պսակ պէճնել դան ճակատիդ :

Աղատութեան միշտ անձնւէր,
Գաղափարդ է յաղթանակեր».

ԱՄԵՐԻԿԱՅԻ
ՑՈՒԷԼԵԱՆԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ
ՑԱՆՉՆԱԽՈՒՄՐԲ

Առենապետ,

Առենադպիր,

1910, Դեկտեմբեր,

Գանձապետ,



21815
2013

